Ղուլիճան գեղում, մի գեղացի պեղում է Արեւապաշտական մի գերեզման 1909ին եւ գտնում է կարասի մէջ մի չորացած կմախք: Ցայտնի բան է բիրտ գեղացին կարասը ջարդել էր, ոսկորները խորել էր. իսկ կարասից դուրս բերած բրոնզեայ գօտին, կէս մետրանոց երկաթէ նեղ ու կոր դաշոյնը պահել էր, որը ճարտարապետ Թորոսմանը գնաց, գնեց եւ բերեց Լենինական. դաշոյնը եւ այդ գօտին երկար ժամանակ մնաց Լենինականում–Ցակովը Կարանեանի պահեստում, որտեղից վերցրի եւ նկարիչ Ռաֆայէլեանին ծրագրեցի, որ վերակազմէ այդ գօտին: Գօտին եւ վերակազմութիւնը ներկայիս Հայաստանի (Երեւանի) թանգարանում է:

Գօտին կազմուած է բրոնզից, երկայնութիւնը 75 սանտիմետր է, լայնութիւնը 20 սանտիմետր: Երկու ծայրերը համանման վիշապներով զարդարուած են եւ շարունակւում է վիշապների երկչարքը ամբողջ երկարութեամբ: Նկարն ունի կենդրոն, որից վիշապները դէպի ծայրերն են ուղղուած: Գօտին դեղին, փափուկ բրոնզից է շինուած, ինչպէս նկատելի է սկզբում ամրացրած է եղել կաշու վրայ, որի ծայրերը կապել են ճարմանդով: Քանդակները շատ նախնական են, ինչ որ մի կարծր ծայրով եւ թակով համանման փոսիկներ է խփած եւ այդ փոսիկներից կազ-